ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ)

Հարց 1. Ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը՝

Ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 1)

Հարց 2. Ինչպե՞ս են գործում Սահմանադրության նորմերը՝

Անմիջականորեն

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 6)

Հարց 3. Նշվածներից ո՞ր դեպքում մարդուն չի կարելի ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի՝

Առանց իր համաձայնության

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 17)

Հարց 4. Նշվածներից ո՞վ ունի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 23)

Հարց 5. Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող է սահմանափակվել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը՝

Միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 23)

Հարց 6. Նշվածներից ո՞վ ունի մտքի ազատության իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 26)

Հարց 7. Նշվածներից ո՞վ ունի խոսքի ազատության իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 27)

Հարց 8. Նշվածներից ո՞վ ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք՝

Յուրաքանչյուր քաղաքացի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 28)

Հարց 9. Նշվածներից ովքե՞ր չեն կարող ընտրել և ընտրվել՝

Օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 30)

Հարց 10. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, նշվածներից ովքե՞ր չեն օգտվում հողի սեփականության իրավունքից՝

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 31)

Հարց 11. Նշվածներից ո՞վ ունի հանգստի իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 33)

Հարց 12. Նշվածներից ի՞նչ կարգով է անցկացվում միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում՝

Անվճար

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 39)

Հարց 13.Նշվածներից ո՞վ օրենքով սահմանված կարգով ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝

Յուրաքանչյուր քաղաքացի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 39)

Հարց 14. Նշվածներից ո՞վ ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 40)

Հարց 15. Նշվածներից ո՞վ ունի հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 40)

Հարց 16. Նշվածներից ո՞վ ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 20)

Հարց 17. Նշվածներից ու՞մ օգտին են մեկնաբանվում չփարատված կասկածները՝

Մեղադրյալի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 21)

Հարց 18. Նշվածներից ո՞վ է պարտավոր օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 45)

Հարց 19. Նշվածներից ո՞վ է պարտավոր պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 47)

Հարց 20. Ի՞նչ ժամկետով է ընտրվում Հանրապետության Նախագահը՝

Հինգ տարի ժամկետով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 50)

Հարց 21. Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ե՞րբ է անցկացվում Հանրապետության Նախագահի ընտրությունը՝

Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտից 50 օր առաջ

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 51)

Հարց 22. Ո՞վ է նշանակում և ազատում կառավարության անդամներին՝

Հանրապետության Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 23. Նշվածներից ո՞վ է նշանակում և հետ կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին՝

Հանրապետության Նախագահը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 24. Նշվածներից ո՞վ է նշանակում և ազատում զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը՝

Հանրապետության Նախագահը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 25. Նշվածներից ո՞ր իրավական ակտն է հրապարակում Հանրապետության Նախագահը՝

Կարգադրություն

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 56)

Հարց 26. Նշվածներից ո՞վ է ստորագրում և հրապարակում Ազգային ժողովի որոշումները՝

Ազգային ժողովի նախագահը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 62)

Հարց 27. Նշվածներից ու՞մ է պատկանում Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը՝

Կառավարությանը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 75)

Հարց 28. Նույն նստաշրջանի ընթացքում կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի առնչությամբ քանի՞ անգամ կարող է դնել իր վստահության հարցը՝

Ոչ ավելի, քան երկու անգամ

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 75)

Հարց 29. Նշվածներից ո՞ր իրավական ակտերով են սահմանվում կառավարության լիազորությունները՝

Սահմանադրությամբ և օրենքներով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 85)

Հարց 30. Նշվածներից ո՞վ է ապահովում Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը՝

Կառավարությունը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 89)

Հարց 31. Նշվածներից ինչպիսի՞ կառավարում է իրականացվում համայնքներում՝

Տեղական ինքնակառավարում

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 104)

Հարց 32. Ու՞մ առաջարկով են Սահմանադրությամբ սահմանված կարգով հանրաքվեի դրվում օրենքները՝

Ազգային ժողովի կամ կառավարության

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 112)

Հարց 33. Հանրապետության Նախագահը՝

Կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդ և նախագահում այն

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 34. Նշվածներից ովքե՞ր ունեն Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք՝

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 25)

Հարց 35. Ո՞ր իրավական ակտով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը՝

Օրենքով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 30)

Հարց 36. Նշվածներից ո՞վ ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 38)

Հարց 37. Հանրապետության Նախագահը հետևում է՝

Սահմանադրության պահպանմանը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 49)

Հարց 38. Ե՞րբ է նոր կամ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում՝

Ընտրությունից հետո՝ քսաներորդ օրը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 51)

Հարց 39. Ե՞րբ չի անցկացվում Հանրապետության Նախագահի ընտրություն՝

Ռազմական և արտակարգ դրության ժամանակ

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 53.1)

Հարց 40. Ո՞ւմ առաջարկությամբ է Հանրապետության Նախագահը նշանակում մասնագիտացված դատարանների նախագահներին՝

Արդարադատության խորհրդի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 41. Նշվածներից ո՞վ է համակարգում պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում՝

Հանրապետության Նախագահը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 42. ՈՒ՞մ կողմից է նշանակվում վերահսկիչ պալատի նախագահը՝

Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով.

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 83.4)

Հարց 43. Նշվածներից ու՞մ առաջարկությամբ է Ազգային ժողովը նշանակում սահմանադրական դատարանի 5 անդամ՝

Ազգային ժողովի նախագահի:

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 83)

Հարց 44. Ո՞վ է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին որոշումը՝

Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 81)

Հարց 45. Ո՞վ է վարում արդարադատության խորհրդի նիստերը՝

Վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի.

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 94.1)

Հարց 46. Հայաստանի Հանրապետությունում ո՞ր մարմինն է իրականացնում սահմանադրական արդարադատություն՝

Սահմանադրական դատարանը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 93)

Հարց 47. Ո՞վ է հաստատում վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը՝

Ազգային ժողովը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 83.4)

Հարց 48. Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում է՝

Արտահերթ

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 72)

Հարց 49. Ի՞նչ հիմունքներով է պատգամավորը կատարում իր լիազորությունները՝

Մշտական հիմունքներով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 65)

Հարց 50. Պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է՝

Իր խղճով և համոզմունքներով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 66)

Հարց 51. Ո՞վ է ընդունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը՝

Հանրապետության Նախագահը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 55)

Հարց 52. Ինչպե՞ս են ձևավորում համայնքներն իրենց բյուջեն՝

Ինքնուրույն

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 106)

Հարց 53. Ինչպիսի՞ կարգավիճակ ունի Երևանը՝

Համայնքի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 108)

Հարց 54. Ո՞ր իրավական ակտով են սահմանվում համայնքների միավորման կամ բաժանման
սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները՝

Օրենքով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 110)

Հարց 55. Նշվածներից ո՞ր իրավական ակտն է ընդունում կառավարությունը՝

Որոշում

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 85)

Հարց 56. Կառավարությունը ու՞մ հետ է համատեղ մշակում և իրականացնում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը՝

Հանրապետության Նախագահի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 85)

Հարց 57. Նշվածներից ո՞ր լիազորությունն է իրականացնում կառավարությունը՝

Պետական բյուջեի նախագիծը ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 89)

Հարց 58. Ո՞վ է հրավիրում և վարում կառավարության նիստերը՝

Վարչապետը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 86)

Հարց 59. Ո՞վ է մշակում և իրականացնում Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը՝

Կառավարությունը

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 85)

Հարց 60. Ո՞ր հարցերի առնչությամբ է Հայաստանի Հանրապետության վարչապետն ընդունում որոշումներ՝

Կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 87)

Հարց 61. Ինչպե՞ս կարող են համայնքի անդամները մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝

Ուղղակիորեն՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 107)

Հարց 62. Ո՞ր իրավական ակտով են սահմանվում Երևան քաղաքում տարածքային կառավարման առանձնահատկությունները՝

Օրենքով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 88.1)

Հարց 63. Օրենքով սահմանված կարգով ի՞նչ ժամկետով են ընտրվում տեղական ինքնակառավարման մարմինները՝

Չորս տարի ժամկետով

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 107)

Հարց 64. Ի՞նչ է համայնքը՝

Մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 104.1)

Հարց 65. Ո՞ր հարցերում են զինված ուժերը պահպանում չեզոքություն՝

Քաղաքական հարցերում

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 8.2)

Հարց 66. Ո՞վ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու իրավունք ունի՝

Յուրաքանչյուր ոք

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 18)

Հարց 67. Առանց ո՞ր մարմնի համաձայնության պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝

Ազգային Ժողովի

(ՀՀ Սահմանադրություն, հոդ. 66)